



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատում:

**2017-2018 թվականների օրենսդրական փոփոխությունների հակիրճ
վերլուծություն**

Սույն վերլուծությունը իրականացվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից 2018 թվականին:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Ազատությունից զրկված անձանց իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրատարրերից է հանդիսանում պատժից ազատման ինստիտուտների արդյունավետ գործունեությունը: Այս առումով Հայաստանի Հանրապետությունում, ի թիվս այլ հնարավորությունների ու մեխանիզմների, առանձնակի կարևորություն ունի պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը: Վերջինս մշտապես եղել և շարունակում է մնալ հանրության և քրեական արդարադատության ոլորտի մասնագետների ուշադրության կենտրոնում, ինչը պայմանավորված է ինչպես այս ինստիտուտի կարևորությամբ, այնպես էլ դրա գործունեության ընթացքում դրսևորված խնդիրների բազմազանությամբ ու, ընդհանուր առմամբ, ոչ բավարար արդյունավետությամբ:

Վերջին տարիներին պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը մշտապես եղել է քննադատությունների կենտրոնում և ազատությունից զրկված անձանց բողոքի հիմնական առարկան, ինչն էլ հանգեցրել է համակարգի շարունակական փոփոխությունների:

Այսպես, 2017 թվականի ընթացքում օրենսդրական փոփոխություններ տեղի ունեցան պատժի կրումից վաղաժամկետ ազատման համակարգում, ինչին հաջորդեցին նաև պրակտիկայում փոփոխությունները: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-49_Ն 1-ին հոդվածը չեղյալ ճանաչելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու» մասին և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

կատարելու մասին» օրենքներով փոփոխություններ տեղի ունեցան համապատասխան օրենսգրքերում:

Կատարված փոփոխությունները միտված էին մասնավորապես՝

- Անկախ հանձնաժողովների և քրեակատարողական հիմնարկի վարչակազմերի գործառույթների տարանջատմանը
- Անկախ հանձնաժողովի կազմից ենթահանձնաժողովների վերացմանը
- Անկախ հանձնաժողովների կազմի վերանայում և անդամների ներգրավում հետևյալ ոլորտներից՝ հոգեբան, հոգեբույժ ՀՀ առողջապահության նախարարությունից, սոցիալական աշխատող ՀՀ սոցիալական և աշխատանքի հարցերի նախարարությունից, կրիմինոլոգ ՀՀ ԱՆ-ին, ներկայացուցիչ ՀՀ նախագահի աշխատակազմից, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից և հասարակական կազմակերպություններից
- Որոշում կայացնելու չափանիշների սահմանմանը
- Անկախ հանձնաժողովի որոշումների բողոքարկման հնարավորության տրամադրմանը

2017 թվականին արձանագրվել է դատապարտյալների՝ պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման թվի կտրուկ աճ: Այսպես, համաձայն պաշտոնական տվյալների՝ 2017 թվականի հունվար-մայիս ամիսներին պատժի կրումից ազատվել է 50 ազատագրված անձ, հունիս-դեկտեմբեր ամիսներին՝ 315: Ընդհանուր առմամբ 2017 թվականին պատժից պայմանական վաղաժամկետ ազատվել է 365 դատապարտյալ:

Հատկանշական է, որ 2017 թվականի առաջին կեսում քրեակատարողական հիմնարկների կողմից քննարկվել է ընդհանուր առմամբ 1969 անձանց պատժից



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը, որից ՔԿ վարչակազմի կողմից դրական եզրակացություն է ստացել 245-ը: 245-ից պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման հարցերով կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների կողմից դրական եզրակացության է արժանացել 61 անձ:

Նույն տարվա երկրորդ կեսին արձանագրվել է հետևյալ պատկերը: Անկախ հանձնաժողովի քննարկամանը ներկայացվել է ընդհանուր առմամբ 2303 անձի վերաբերյալ գործ, որից դրական եզրակացություն անկախ հանձնաժողովի կողմից տրվել է 162-ով, սակայն վերջնական արդյունքում դատարանի կողմից դրական որոշում տրվել է 315 գործով¹: Այսինքն, անկախ նրանից, որ անկախ հանձնաժողովի կողմից տրվել է բացասական եզրակացություն, վերջիններս դատարանների կողմից ստացել են դրական որոշում: Ըստ այդմ, 2017 թվականի արդյունքները զգալիորեն բարձրացել են: Համեմատության համար նշենք, որ 2016 թվականին ՔԿՀ վարչական հանձնաժողովների նիստերին ներկայացվել է թվով 4560 դատապարտյալի գործ, որից անկախ հանձնաժողովներին ներկայացվել են թվով 620 դատապարտյալներ: Անկախ հանձնաժողովի կողմից այս թվից հավանության արժանացել է 156-ը, իսկ դատարանի կողմից ազատ է արձակվել վերջնական արդյունքում ընդհանուր առմամբ 115 դատապարտյալ²:

Չնայած իրականացված փոփոխություններին և պատժից պայմանական վաղաժամկետ ազատված դատապարտյալների թվի աճին, այնուհանդերձ պետք է նշել, որ արձանագրվել են մի շարք խնդիրներ, որոնց վերաբերել են հիմնականում անկախ հանձնաժողովների կողմից կայացվող որոշումներին: Մասնավորապես,

¹ Պաշտոնական տեղեկությունը ստացվել է ՀՀ ԱԼ Քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբից

² <http://pmg.am/hy/library/annual-reports/2013-3>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

որոշումները չեն եղել հիմնավորված և պատճառաբանված: Բացի այդ, արձանագրվել են նաև որոշման կայացման ընթացակարգային խնդիրներ, որոնք ընհանուր առմամբ բացասաբար են անդրադարձել համակարգի արդյունավետ գործունեության վրա:

Այսպես, արձանագրվել են գործեր, որոնց պարագայում անկախ հանձնաժողովի կողմից դատապարտյալի ընթացակարգային իրավունքները չեն ապահովվել: Մասնավորապես, անկախ այն հանգամանքից, որ ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը նախատեսել էր դատապարտյալի ընթացակարգային իրավունքները, դատապարտյալները անկախ հանձնաժողովի կողմից դրանց մասին չեն ծանուցվել ինչպես նիստից առաջ, այնպես էլ դրա ընթացքում, չի ապահովվել անձի կողմից իրեն պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցի քննարկմանը պատշաճ մասնակցելու իրավունքը՝ ներկայացնելու իր դիտարկումները, փաստարկները և հակափաստարկները, չի ապահովվել դատապարտյալի թարգմանիչ ունենալու իրավունքը, անկախ հանձնաժողովի նիստը տևել է ընդամենը մի քանի րոպե, ինչը անձի վարբերյալ եզրակացություն կազմելու առնչությամբ բավարար համարվել չի կարող: Հանձնաժողովի որոշումները հիմնվել են բացառապես ՔԿՀ վարչակազմի կողմից ներկայացված դատապարտյալի անձնական գործից արված ամփոփ տեղեկանքի և դատապարտյալի անձի ու վարքագծի փաստական նկարագրում առկա տեղեկատվության հիման վրա: Որևէ այլ տեղեկություն չի քննարկվել: Ինչ վերաբերում է դատապարտյալի պատժից պայմանական վաղաժամկետ ազատման հարցի քննարկմանը դատարանի կողմից, ապա անհրաժեշտ է փաստել, որ դատական նիստերը հիմնականում տեղի են ունենում քրեակատարողական հիմնարկի տարածքում՝ որևէ պաշտոնատար անձի աշխատասենյակում, որտեղ հնարավոր չէ ապահովել դատարանի անկախության երաշխիքները, ինչպես նաև կողմերի հավասարությունը և մրցակցությունը: Ավելին, դատարանի կողմից չի տարվում գործին վերաբերող էական հանգամանքների ուսումնասիրություն, որոշումը



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

կայացվում է՝ հիմք ընդունելով ՔԿՀ կողմից ներկայացված սահմանափակ տեղեկությունները:

Նման և այլ խնդիրները հիմք հանդիսացան օրենսդրական նոր փոփոխությունների:

Նախ պետք է նշել, որ Անկախ հանձնաժողովների ձևավորման մասին ՀՀ նախագահի հրամանագիրը ուժը կորցրել է և անկախ հանձնաժողովները ինստիտուցիոնալ առումով այլևս գոյություն չունեն և ընգրկված չեն պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման գործընթացում:

Սրան զուգահեռ, 2018 թվականի մայիսի 22-23-ի խորհրդարանական լսումներով անցկացվեց «Քրեական օրենսգրքում փոփոխությունների կատարելու մասին» և կից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթներով նախատեսված փոփոխությունների քննարկումը, ինչի արդյունքում առաջարկվող օրենսդրական փաթեթները ս.թ. մայիսի 23-ին ընդունվել են:

Համաձայն 2018 թվականի օրենսդրական կարգավորումների՝ ինստիտուցիոնալ առումով պայմանական վաղաժամկետ ազատման հարցում հիմնական դերակատարումը ընկնում է **քրեակատարողական ծառայության և պրոբացիոն ծառայության վրա**³:

Մասնավորապես, նոր ընթացակարգի համաձայն՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու նպատակով դատապարտյալը պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց ոչ շուտ, քան երեք ամիս առաջ իրավունք ունի գրավոր դիմում ներկայացնել պատիժը կատարող հիմնարկի **վարչակազմին**: Պատիժը

³ ՀՀ Օրենքը ՀՀ Քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, Կ-309-26.04,2018_ՊԻՄԻ-011/2



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

կատարող հիմնարկի վարչակազմը սույն մասով նախատեսված ժամկետը լրանալուց մեկ ամիս առաջ պարտավոր է դատապարտյալին գրավոր կերպով ծանուցել դիմում ներկայացնելու կարգի մասին:

Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում պատիժը կատարող հիմնարկի **վարչակազմն** այդ մասին պաշտոնապես ծանուցում է **պրոբացիայի ծառայությանը**: Դատապարտյալի գրավոր դիմումն ստանալուց հետո՝ արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող նախարարի սահմանած ժամկետում և կարգով, պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն այդ մասին պաշտոնապես ծանուցում է **քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնին**՝ կցելով դատապարտյալի անձնական գործի ամփոփ տեղեկանքը և անհրաժեշտ այլ փաստաթղթերը: Քրեակատարողական ծառայությունը և պրոբացիայի ծառայությունը պաշտոնական ծանուցումն ստանալուց հետո՝ 80 օրվա ընթացքում, կազմում և ներկայացնում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1.1- ին և 1.2-րդ մասերով նախատեսված հանգամանքների վերաբերյալ **զեկույցներ**:

Եթե **քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները դրական են**, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու **հարցը դատարան ներկայացնելու մասին որոշում** և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան:



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Եթե **քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցներից մեկը բացասական է**, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը **դատարան ներկայացնելու մասին որոշում**, **եթե դատապարտյալը տալիս է գրավոր համաձայնություն**, և յոթ աշխատանքային օրվա ընթացքում միջնորդագրով ներկայացնում դատարան:

Եթե **քրեակատարողական ծառայության և պրոբացիայի ծառայության զեկույցները բացասական են**, ապա պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի նկատմամբ նշանակված պատժի ժամկետի՝ օրենքով սահմանված մասը լրանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, ընդունում է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը **դատարան չներկայացնելու մասին որոշում**: Այս դեպքում դատապարտյալը կարող է որոշումը բողոքարկել դատարան⁴:

Քրեակատարողական ծառայության կամ պրոբացիայի կողմից ներկայացված զեկույցներից մեկը բացասական է, ապա դատապարտյալի պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կարող է կրկին քննարկել համապատասխան որոշման ընդունումից հետո **երեք ամիս անց**:

Այն դեպքում, երբ առկա է դատարանի կողմից պատժից վաղաժամկետ ազատելը կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը

⁴ ՀՀ Օրենքը ՀՀ Քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին, Կ-309-26.04.2018-ՊԻՄԻ-011/2



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

մերժելու մասին որոշում, ապա դատապարտյալի պատիժը կրելուց ազատման կամ չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ հարցը կրկին կարող է քննարկման ներկայացվել վերջնական դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ **վեց ամիս անց**:

Ավելացնենք, որ Քրեակատարողական օրենսգրքում կատարած փոփոխություններով նախատեսվում են նաև անձի ընթացակարգային իրավունքները: Մասնավորապես, ըստ փոփոխությունների՝ 115-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Դրական զեկույցների դեպքում՝ մինչև զեկույցները դատարան ներկայացնելը, իսկ զեկույցներից առնվազն մեկի բացասական լինելու դեպքում՝ մինչև պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի կողմից որոշում ընդունելը, դատապարտյալն իրավունք ունի.

- 1) իրեն մատչելի ձևով, այդ թվում՝ համապատասխան մասնագետի միջոցով ծանոթանալու իր վերաբերյալ կազմված նյութերին և անվճար ստանալու դրանց պատճենները.
- 2) ներկայացնելու բացատրություններ և փաստաթղթեր, հանդես գալու հայտարարություններով. 3) հայտնելու իր կարծիքը իրեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ.
- 4) ստանալ իր վերաբերյալ կազմված զեկույցները.
- 5) հայերենին չտիրապետելու դեպքում պետության միջոցների հաշվին օգտվելու թարգմանչի ծառայություններից.
- 6) օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավունքներ:

Օրենսդրական նման դրույթի նախատեսմամբ հստակ չէ սակայն, թե արդյոք արդեն կազմված զեկույցների պայմաններում անձի բացատրությունները և հայտարարությունները ներառվելու են դրանցում և վերանայվելու են, ինչ հարցեր են քննարկվելու զեկույցների կազմվելուց հետո՝ բացառապես դատապարտյալի կողմից



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

դատարան դիմելու համաձայնությունը ստանալը, որի վերաբերյալ դատապարտյալն իրավունք ունի հայտնելու իր կարծիքը:

Նշված կարգավորումները թեպետև միտում ունեն ավելի արդյունավետ դարձնել պատժի կրումից ազատման ինստիտուտի գործունեությունը, սակայն օրենսդրական նման կարգավորումները արդեն իսկ հիմք են տալիս որոշակի մտահոգությունների: Մասնավորապես՝

- Պրոբացիոն ծառայության համար զեկույցներ ներկայացնելու պարտադիր օրենսդրական պահանջի արդյունավետ իրագործումը ենթադրում է պրոբացիոն ծառայողների մասնագիտական կարողությունների առկայություն, ինչպես նաև դատապարտյալի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության առկայություն, ինչը հավաքված կլինի պարբերական աշխատանքների արդյունքում: Մինչդեռ ներկայումս պրոբացիոն ծառայությունը ոչ մասնագիտական կարողությունների, ոչ ֆունկցիոնալ առումով դեռևս նման երաշխիք չի տալիս.
- Քրեակատարողական ծառայության ներգրավումը պատժից ազատման գործընթացում հնարավոր է ավելորդ զբաղվածություն ստեղծի առաջին հերթին քրեակատարողական ծառայության համար, ինչը բացասաբար անդրադարձ կունենա որոշումները ողջամիտ ժամկետներում ընդունելու համար.
- Ինչպես քրեակատարողական ծառայության, այնպես էլ պրոբացիոն ծառայության կողմից ներկայացվող զեկույցները պետք է արտացոլեն դատապարտյալի ուղղմանն ուղղված նախադրյալները, վարքագծի փոփոխություններն ու հեռանկարները, ինչը պահանջում է դատապարտյալի հետ **ստատիկ և դինամիկ պլանով** աշխատանք և ըստ այդմ նաև հստակ



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

չափանիշներ և պայմաններ այդ աշխատանքը և ըստ այդմ **դատապարտյալի վարքագծի փոփոխությունները գնահատելու համար**: Մինչդեռ, դեռևս տեսանելի չեն վարքագծի փոփոխությունները գնահատելու հստակ և իրատեսական չափանիշները, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում բացակայում են այն պայմաններն ու հնարավորությունները, որոնք թույլ կտան դատապարտյալների հետ առավելագույնս աշխատանքներ տանել

- Դատարանի կողմից պատժից պայմանական վաղաժամկետ ազատման մերժման դեպքում դատապարտյալի գործը կրկին կարող է քննության ենթարկվել այդ որոշման ուժի մեջ մտնելուց հետո 6 ամիս անց, ինչը ողջամիտ ժամկետ չէ: Նմանապես, ցմահ դատապարտյալների պարագայում կրկին անգամ վաղաժամկետ ազատման հարցը կարող է քննարկվել դատարանի կողմից մերժման որոշումը ուժի մեջ մտնելուց հետո 3 տարի անց, ինչը կրկին երկար ժամկետ է:

Ներկայացված խնդրահարույց հարցերի լուծման համար անհրաժեշտ է՝

- Պրոբացիոն ծառայողների կադրային փոփոխություն՝ պրոբացիոն ծառայությունը պետք է հազեցած լինի **վերականգնողական արդարադատության մտածողությամբ** օժտված մասնագետներով՝ հոգեբաններ, սոցիալական աշխատողներ, քրեագետներ և այլն,
- Պրոբացիոն ծառայողների կարողությունների պարբերական զարգացում կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստումների միջոցով,
- Քրեակատարողական ծառայության դերը պատժից պայմանական վաղաժամկետ ազատման գործում պետք է հնարավորինս նվազեցված լինի



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

- Քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների կարողությունների զարգացում,
- Քրեակատարողական հիմնարկներում **դատապարտյալների վարքագծի փոփոխության գնահատման ստատիկ և դինամիկ աշխատանքի համար պայմանների ստեղծում** /զբաղվածության ապահովում, մասնակցություն տարբեր միջոցառումների և այլն/
- Քրեակատարողական ծառայության կողմից զեկույցի ներկայացման համար հստակ և իրատեսական չափանիշների սահմանում
- անհրաժեշտ է դատապարտյալի վերաբերյալ զեկույցներ կազմելու ընթացակարգում ապահովել վերջինիս ներգրավվածությունը, բացատրություններ և փաստաթղթեր տրամադրելու իրավունքը, հայտարարություններով հանդես գալու հնարավորությունը և այլ իրավունքներ:
- Դատարանի կողմից մերժման դեպքում կրկին անգամ վաղաժամկետ ազատման հարցը քննարկելու ավելի վաղ հնարավորության սահմանում